

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՊԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՎԱԾ 2014 ԹՎԱԿԱՆԻ

2014-2015 ուստարում մարզի հանրակրթական դպրոցների առաջին դասարան է ընդունվել 1700 աշակերտ: Մարզում ձևավորվել է 1212 դասարան՝ 16593 աշակերտով:

2014-2015 ուսումնական տարում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն ընդգրկվել են մարզում գործող Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց, որտեղ կոմպլեկտավորվել է 9 դասարան՝ 49 աշակերտով: Աշակերտների շարժի հաշվառումը կատարվում է ՀՀ մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնում: Ծնողի դիմումի համաձայն մարզի հանրակրթական դպրոցների առաջին դասարան չեն հաճախել 5 աշակերտ՝ առողջական խնդիրներ ունենալու պատճառով: 2015 թվականին այդ երեխաները կհաճախեն 1-ին դասարան: ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական 50 դպրոցում ջեռուցումը լուկալ է: Հանրակրթական դպրոցները ապահովված են վառելիքով:

ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում սովորողի ընդունելությունը, տեղափոխումը և ազատումը կատարվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարի «ՀՀ ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգի»:

2014 թվականին ՀՀ Արագածոտնի մարզպետի որոշմամբ Աշտարակի թիվ 1, Աշտարակի թիվ 2, Աշտարակի թիվ 3, Աշտարակի թիվ 4, Աշտարակի թիվ 1 հատուկ, Աշտարակի թիվ Վ. Պետրոսյանի, Մուղնու, Կարինի, Դավթաշենի, Սուսերի, Հակոյի, Երնջատափի, Ապարանի թիվ 1, Արագածավանի թիվ 1, Մաստարայի, Նիգավանի դպրոցներում մարզպետի 31.05.2010թ. թիվ 70-Ա որոշմամբ հաստատված մարզի հանրակրթական դպրոցների կառավարման խորհուրդների կազմում կատարվել են փոփոխություններ: ՀՀ ԿԳՆ է ուղարկվել

ՀՀ Արագածոտնի մարզպետի
աշխատակազմի վարչության
թիվ _____
17.12.14թ.
Մուտք № 11017482-14

առաջարկություն « Նիգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կազմում ՀՀ ԿԳ նախարարության կողմից առաջադրված անդամի փոփոխության վերաբերյալ:

2014 թվականին ՀՀ տարածքային կառավարման և կրթության և գիտության նախարարությունների կողմից ներկայացված նախագծերը քննարկվել են ՀՀ Արագածոտնի մարզպետարանում և 11 նախագծերի վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ:

2014 թվականին ՀՀ Արագածոտնի մարզպետի կարգադրությամբ դպրոցական աշխատանքները ոչ պատշաճ կատարելու համար կարգապահական տույժի են ենթարկվել **Արագածի թիվ 1**/Սարգսյան Համլետ/,**Գեղադիրի** /Խաչատրյան Արամ/,**Անտառուտի** /Շմավոնյան Սուրիկ/, **Հնաբերդի** /Բաղդասարյան Արշալույս/, **Զարինջայի** /Ղազարյան Սիմավոն/ միջնակարգ և **Ապարանի թիվ 1** /Եփրեմյան Վահագն/,**Թալինի թիվ 2** /Գրիգորյան Հովիկ/ հիմնական /խիստ նկատողություն/ դպրոցների տնօրենները:

2014 թվականին մարզի 17 հանրակրթական դպրոցներում /Մաստարայի, Ձորագլխի, Դավթաշենի, Կայքի, Իրինդի, Քուչակի, Սիփանի, Ավանի, Կաքավաձորի, Սուսերի, Աշնակի, Լեռնապարի միջնակարգ և Աշտարակի թիվ 3, Դիանի, Լուսակնի, Օշականի, Միրաքի/ հիմնական դպրոցներում հայտարարվել և կազմակերպվել է դպրոցի տնօրենի թափուր տեղի համար մրցույթ:

Ուսուցչի թափուր տեղի մրցույթն իրականացվում է 2010թվականի հոկտեմբեր ամսից,իսկ 2013 թվականից ՀՀ ԿԳ նախարարի հուլիսի 30-ի 1001 հրամանով հաստատված կարգով: 2014 թվականին մարզի 87 հանրակրթական դպրոցներում հայտարարվել է ուսուցչի թափուր տեղի մրցույթ՝ տարբեր առարկաներից: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցների հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր: Մրցույթ չկայանալու կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում հայտարարվել է նոր մրցույթ:

2014 թվականին ՀՀ Արագածոտնի մարզում գործում է համայնքային ենթակայության 31 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ ձևավորվել է 79 խումբ՝ 2133 երեխայով:

ՀՀ Արագածոտնի մարզի 34 հանրակրթական դպրոցում գործում է նախակրթարան՝ 513 երեխայով:

2014թ. դեկտեմբեր ամսին մարզի մանկապարտեզի 21 տնօրենի և ավելի քան 50 մանկավարժի և դաստիարակի համար ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի կողմից կազմակերպվել են 30 ժամյա վերապատրաստման դասընթացներ:

Մարզի հանրակրթական դպրոցների լիցենզավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացվել է ՀՀ ԿԳ նախարարություն: Սահմանված ժամկետում սկսվել է մարզի հանրակրթական դպրոցների լիցենզավորման աշխատանքները: Մարզի հանրակրթական դպրոցները ստացել են լիցենզիա, բացառությամբ՝ Օշականի հիմնական, Կարին, Արագածի 2, Ճարճակիսի դպրոցների, որոնք ունեն դպրոցի շենքը Հայաստանի Հանրապետությանը հանձնելու շենքի վկայականի ձեռք բերման խնդիր:

2014թ. մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպվել և իրականացվել է հանրապետական մաշտաբով սպորտային միջոցառումներ:

Մարզի երիտասարդները մասնակցել են «Բազե-2014» համահայկական երիտասարդական հավաքին:

«Կորյուն» ռազմամարզական խաղերի տարածքային և մարզային փուլերին մասնակցել են մարզի 42 դպրոցների 255 աշակերտ: Կազմակերպվել և անցկացվել է ՀՀ դպրոցականների 1-6-րդ դասարանների ՀՀ Ազգային ժողովի խաղարկության գավաթի մրցումներ, ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերին մասնակցել են 85 դպրոցի 2300 աշակերտ: Կազմակերպվել և անց է կացվել «Լավագույն գյուղական մարզական համայնք», «Լավագույն մարզական ընտանիք» միջոցառումները: Լավագույն 12 ընտանիք Ծաղկաձողում մասնակցել է հանրապետական եզրափակիչ փուլին: Մարզի 37 ըմբիշներ 2014թ. մասնակցել են հանրապետական և միջազգային տարբեր մրցաշարերի:

2014 թվականին մարզի 20 պատանի շախմատիստները 11 օր մասնակցելու են Անդրանիկ Մարգարյանի հիշատակին նվիրված հուշամրցաշարին Երևանում, Ջերմուկում քաղաքում կայացած շախմատի Հայաստանի «Ա» խմբի կիսաեզրափակիչ առաջնությանը: Ջերմուկում 2014 շախմատի մրցաշարին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ՀՀ արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների 10 աշակերտներ: Բաթումի քաղաքում կայացած Եվրոպայի պատանիների առաջնությանը մասնակցել է 8-ամյա Արսեն Դավթյանը: ՀՀ Արագածոտնի

մարզպետարանի և ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ ՀՀ Արագածոտնի համայնքներում գործող մշակույթի տներում անվճար ցուցադրվել են կինոդիտումներ, կազմակերպվել են ներկայացումներ:

ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների 1500 աշակերտ Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում ունկնդրել են «Ալմաստ» և «Անուշ» օպերաները:

ՀՀ Արագածոտնի մարզում գործող մշակույթի տներում մշակույթի նախարարության հետ համատեղ անց է կացվել դուդուկի, ազգագրական երգ ու պարի, «Սասունցի Դավիթ» էպոսի փառատոներ:

2014թ. մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպ և իրականացվել է հանրապետական մաշտաբով պետական, ազգային նշանակություն ունեցող բազմաթիվ միջոցառումներ.

«Մեր մեծերը» ծրագրի շրջանակներում անցկացվել է բաց դասեր, կլոր սեղաններ, բազմաբնույթ միջոցառումներ նվիրված Արշակ Չոպանյանին, Գևորգ Չորեքչյանին, Վիլյամ Սարոյանին, Նիկոլ Աղբալյանին և Հայաստանի շախմատի հավաքականին: «Բարեկենդան», «Ծաղկազարդի տոն», «Ձատիկ», «Վարդավառ», «Խաչվերած», «Հայոց ազգային բանակի կազմավորման 21-րդ տարեդարձ», «Սասնա ծռեր» էպոսյան օր, «Էրզրի համի հիշողություն, ազգային ուտեստների», «Թանգարանը որպես ոչ ֆորմալ կրթության միջավայր», «Վերածնունդ», «Երկնքից երեք խնձոր ընկավ...», «Մինասի գույներով», «Ոսկե աշուն», «Կինոաշուն ազգային կինո ամիս», «Լեզու և հայրենիք», «Եգիպտոսն աշխարհի երեխաների աչքերով», «Մենք ենք մեր մարզը», «Արարատ 73-ի հաղթանակի 40 ամյակ»-ին նվիրված գեղարվեստական մշակութային, ստեղծագործական միջոցառումներ:

Ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացն կազմակերպելու նպատակով «Հայոց Արժիվներ» հասարակական կազմակերպության կողմից մարզի 40 հանրակրթական դպրոցներին տրամադրվել է օդամղիչ հրացաններ: 61 հանրակրթական դպրոցներ ունեն ուսումնական զենք- զինամթերք, 23 դպրոց դիմել է ՀՀ Արագածոտնի մարզպետին զենք-

զինամթերք ստանալու պահանջով, որից 11 դպրոցների պահանջարկը ուղարկվել է ՀՀ ՊՆ, իսկ 12 դպրոցների համար սպսվում է ոստիկանության եզրակացությունը: Անցկացվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր,որին մասնակցել է մարզի 86 հանրակրթական դպրոց: Զինկոմիսարիատների հետ համագործակցաբար անցկացվել է կցագրման աշխատանքներ: Հի ԿԳ նախարարի , ՀՀ ՊՆ նախարարի և ԵԿՄ- ի կողմից համատեղ ստորագրված հուշագրի համաձայն ՀՀ սրագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում ստեղծվել է «Երկրապահների կամավորական միության ակումբ» Ակումբի մասնակից պատանիները ակրիվորեն մասնակցել են վերապատրաստման դասընթացներին: Դասընթացներիավարտից հետո պատանիները կհանձնեն քննություն և կստանան« սերժանտի» կոչում:

2014 թվականի մարզի հանրակրթական դպրոցներում սովորող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարներ համար փոխանցվել է 5.741.600դրամ:

Մարզի հանայնքներում գործող ազգային փոքրամասնությունների դպրոցները ապահովված են ՀՀ ԿԳ նախարարության կողմից իրենց մայրենի լեզվով երաշխավորված համապատասխան դասագրքերով:

ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից հանձնարարվել է մարզի հանրակրթական դպրոցներին օգտագործել ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված ուսումնական գրականություն և ուսումնադիտողական պարագաներ:Մարզի հանրալրթական դպրոցների ուսուցիչներին և տնօրեններին է բաշխվել 120-ական ուսումնամեթոդական ձեռնարկ:

2014թ. մարզի բոլոր դպրոցները ապահովվել են մեթոդական գրականությամբ և տեղեկագրերով, առարկայական ծրագրերով:

«Փյունիկ» բարեգործական կազմակերպության կողմից ստացվել և մարզի 5 հանրակրթական դպրոցներին է հանձնվել բնագիտական առարկաների լաբորատոր սարքավորումներ/ քիմիա,ֆիզիկա,կենսաբանություն,աշխարհագրություն /:

« ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտի Արագածոտնի մասնաճյուղի կողմից մարզի 523 ուսուցիչների համար կազմակերպվել է նախաատեսուացիոն վերապատրաստման դասընթացներ, իսկ «Հայ եկեղեցու պատմության,» Ես և շրջակա աշխարհ» առարկաներից վերապատրաստման դասընթացներ չեն անցկացվել, քանի որ այդ առարկաները ցանկում ընդգրկված չեն եղել:

« ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտի Արագածոտնի մասնաճյուղի կողմից կազմակերպվել է նաև ազգային փոքրամասնությունների / եզդիներեն լեզվի/ 18 ժամյա վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել է 15 ուսուցիչ, սկսնակ ուսուցիչների վերապատրաստման 15 ժամյա դասընթացներ, որին մասնակցել է 86 ուսուցիչ, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ուսուցիչների վերակատրաստման 12 ժամյա դասընթացներ, որին մասնակցել է 24 ուսուցիչ:

2014թ. դեկտեմբերին « ԿԳՆ ԿԱԻ-ի կողմից կազմակերպվել է 18 ժամյա վերապատրաստում մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնագիտացված կրթական աջակցության գծով տեղեկավարների և մանկական կոլեկտիվների կազմակերպիչների վերապատրաստման դասընթացներ:

« ԿԳՆ-ի 2013թ.18.10 N 665-Ա հրամանով ձևավորված Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման հանձնաժողովի աշխատանքները սկսվել և ավարտվել է սահմանված ժամկետում:

Ատեստավորման ենթակաա ուսուցիչների համար հանձնաժողովը կայացրել է 592 ուսուցչի համար «համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» որոշում:

2014 թվականի մարզի 45 հանրակրթական դպրոցի տարրական դասարանների 2871 աշակերտ միացել է ՄԱԿ պարենի համաշխարհային «Դպրոցական սնունդ» ծրագրին :

2014թ. Աշտարակի տարածաշրջանի, Թալին և Ապարան քաղաքների դպրոցները միացել են **dasar.am** կայքին, նոյեմբեր ամսի ամփոփ տեղեկատվությամբ 8 դպրոցներ հավաքել են 50% -ից ցածր արդյունք՝ Միրաք, Վարսենիս, Սադունց, Ոսկեթաս, Սիփան, Թիկ, Գառնահովիտ, Օշականի հիմնական, իսկ Ագարակավանի, Գետափի, Դաշտաղենի

դպրոցներում գրանցվել է 0 %: 2014 թվականին մարզի 119 հանրակրթական դպրոցներում գործում է ինտերնետային կապ:

ԿՏԱԿ-ի մարզային ներկայացուցչի հետ համագործակցության արդյունքում բոլոր դպրոցներն ունեն էլեկտրոնային հասցե schools.am տիրույթում, որը հնարավորություն է տալիս դպրոցներ հասցնել կրթության բնագավառի նորությունները, ինչպես նաև դպրոցներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն: Ժամանակին ԿՏԱԿ-ին են հանձնվել մարզի հանրակրթական դպրոցներից պահանջվող հաշվետվությունների թղթային և էլեկտրոնային փաթեթները: Մարզի հանրակրթական դպրոցներում վարկանիշավորում անցկացնելու նպատակով սեղմ ժամկետում հավաքագրվել և թղթային ու էլեկտրոնային տարբերակներով ԿՏԱԿ է ուղարկվել տեղեկատվություն մարզի բոլոր հանրակրթական դպրոցների վերաբերյալ:

«Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների թափուր տեղի մրցույթների հայտարարությունները դպրոցների կառավարման խորհուրդների նախագահների կողմից ժամանակին տեղադրվել են մարզային և հանրապետական թերթերում, edu.am, azdarar.am կայքերում, իսկ ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարությունները՝ «ԿԳՆ <<Կրթություն>> շաբաթաթերթում:

«Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում ժամանակին կազմակերպվել և անց է կացվել դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերը: Հաղթող ճանաչված աշակերտները մասնակցել են դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին:

Կազմակերպվել և անց է կացվել «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն դաստիարակ», «ԿԳՆ և Հայ Առաքելական եկեղեցու հետ համատեղ կազմակերպվել և անց է կացվել «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Դասվար», Բնագիտական առարկաներից/քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն, կենսաբանություն/ առարկաների լավագույն ուսուցիչ մրցույթ: Մրցույթի տարածքային փուլում հաղթող ճանաչված 5 ուսուցիչ մասնակցել են հանրապետական փուլին: Հանրապետական փուլում Ուջանի միջնակարգ

դպրոցի Իլեզվի և գրականության ուսուցչուհի **Մարինե Մորիկյանը** արժանացել է 1-ին կարգի դիպլոմի, մյուս մասնակիցներն արժանացել են պատվոգրերի:

2014 թվկանի ընթացքում հոլանդական <<Global Aid Network>> բարեգործական /ոչ առևտրային /կազմակերպության կողմից <<Ուջանի Ջորավար Անդրանիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ին է տրամադրվել 5300 € կահույք և հագուստ, իսկ Ջամշլուի, Սիփանի և Ուջանի դպրոցներին հատկացվել է դպրոցական կահույք:

<<World Vision International>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից..

1. Ի հիշատակում է Թալինի տարածաշրջանի 17 նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստում /2 336 628 դրամ/:

2. Տրամադրվել է կահույք մարզի 8 համայնքի /2 096 000 դրամ/:

3. Տրամադրվել է հագուստ մարզի Թալինի և Ապարանի տարածաշրջանների համայնքներին:

4. Մարզի Թալինի և Ապարանի տարածաշրջաններին տրամադրվել է 2450 շապիկ և 20 խալաթ:

Իրանի Իսլամական Հանրապետության անհայտ բարերարի կողմից <<Հայ դպրոց>> հիմնադրամի անունով ստացվել և մարզի 8 համայնքի է տրամադրվել 1700 \$ արժողությամբ հագուստ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայկական հիմնադրամի կողմից Ապարան, Աշտարակ, Քուջակ համայնքներին հատկացվել է 90 զույգ սպորտային կոշիկ:

Աղյուսակ 1 Կրթության ոլորտի 2014թ. արդյունքային ցուցանիշները

| Միջոցառման անվանումը | Արդյունքային ցուցանիշը | Թիրախ | Փաստացի |
|---|---|-------|---------|
| <p>Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Արագածոտնի մարզում</p> | 1. Համախառն ընդգրկվածությունը | 99.5% | 99.9% |
| | հիմնական դպրոցում | 7:1 | 6:1 |
| | 2. Աշակերտ – ուսուցիչ հարաբերակցությունը՝ հանրակրթության բնագավառում | 48 | 38 |
| | 3. Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների թիվը | 48% | 54% |
| | 4. 3-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածության տեսակարար կշիռը այդ տարիքի երեխաների ընդհանուր թվում | 39% | 60% |
| | 5. Հանրակրթական ծառայությունների որակից աշակերտների և ծնողների բավարարվածության աստիճան | 38% | 49% |
| | 6. ԲՈՒՀ ընդունված դպրոցի շրջանավարտների | | |

| | | | | |
|---|--|--|-------------------------|--|
| | | տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակի մեջ | | |
| Դպրոցների մարզադահլիճների և խաղահրապարակների վերանորոգում, մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում | Բարեկարգված մարզադահլիճներ և խաղահրապարակներ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը | 9.2 % | 9.2 % | |
| Ջեռուցման լոկալ համակարգի ներդրում | Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող | 30.8% 10925 աշակերտ | 42% 7971 աշակերտ | |

| | դպրոցներում սովորող աշակերտների թիվը | | |
|--|---|------------------|-----------------|
| Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ կապով ապահովում) | Համակարգչային դասասենյակներ ունեցող դպրոցների թիվը Ինտերնետ կապով ապահովված դպրոցների թիվը | 119 119 | 119 119 |
| Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, կրթության օրենսդրության մասին իրազեկում | Որակավորման բարձրացման, մեկ կամ մեկից ավելի թեմատիկ ուղղվածությամբ վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվ Համակարգչին տիրապետող ուսուցիչների թիվ | 1800 1120 | 523 1155 |
| Ուսուցիչների, երեխաների և ծնողների համար դասընթացների կազմակերպում ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը ամրապնդելու նպատակով | Ուսուցիչների, երեխաների և ծնողների համար դասընթացների կազմակերպում | 1390 | 1410 |
| Դասավանդման համագործակցային և մանկավարժական նոր մեթոդների ուսուցում | Մարզի 24 համայնքի նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների դաստիարակների և ուսուցիչների համար ուսուցման նոր մեթոդների վերաբերյալ դասընթացների | 756 | 780 |

| | | | |
|--|---|---------------|----------|
| | կազմակերպում և անցկացում | | |
| Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան | Նախապատրաստական աշխատանքների իրականացում ատեստավորման 3-րդ փուլի մասնակից ուսուցիչների համար | 523 20% | 20% |
| Աշակերտական խորհուրդների անդամների համար դասընթացների կազմակերպում | Մարզի 24 համայնքների դպրոցների աշակերտական խորհուրդի անդամների հետ դասընթացների կազմակերպում և անցկացում, աջակցություն նույն համակազմին առնվազն 2 ծրագրերի նախաձեռնության համար | 2400 մասնակից | 2670 |
| Սոցիալապես անապահով, ծնողազուրկ, բազմազավակ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում | Մանկական առողջարարական ճամբարներում ամառային հանգստի կազմակերպում | 105 երեխա | 380երեխա |
| Հատուկ կրթության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման նպաստավոր պայմանների ստեղծում, դասընթացների կազմակերպում | Մարզի ուսումնական հաստատություններում ներառական կրթության զարգացում, թեքահարթակների կառուցում, շինարարական աշխատանքների իրականացում | 15 դպրոց | 5 դպրոց |

| | | | |
|--|--|------------------------|---|
| Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում | Նախադպրոցական հաստատությունների վերանորոգում | 1 հիմնովին և 6 մասնակի | 3 |
| Նախադպրոցական հաստատությունների ջեռուցման խնդրի լուծում | Ջեռուցման համակարգի ներդնում մարզի | 6 ՆՈՒՀ-ում | 4 |

4.2. ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

4.2.1 Քաղաքականության վերլուծություն

Արագածոտնի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման և մարզի մշակույթի բնագավառի միջնաժամկետ ծախսային ծրագրերի քաղաքականությունը շարադրող փաստաթղթերում մեծ տեղ է հատկացված պատմա-մշակութային ժառանգության պահպանման, պատմական միջավայրի պահպանության, մշակութային կյանքի աշխուժացման, մշակույթի ոլորտի կազմակերպությունների գործունեության ընդլայնմանը, համայնքների ֆինանսական վիճակի ամրապնդմանը և մշակութային կյանքի աշխուժացմանը, մշակույթի ոլորտի նյութատեխնիկական բազայի հարստացմանը, կադրերի ուսուցման և վերապատրաստման կազմակերպմանը, մշակութային միջոցառումների թվաքանակի ավելացմանը և այլն:

Արագածոտնի մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Դա լուրջ նախադրյալ է մշակութային կյանքի աշխուժացման և տուրիզմի զարգացման համար: Մարզում առկա են 1790 և ավել պատմա-մշակութային հուշարձաններ, որոնցից 1232-ը հանրապետական և 564 տեղական նշանակության:

Արագածոտնի մարզպետի նախաձեռնությամբ և անմիջական աջակցությամբ ավարտին են հասցվել մարզի պատմամշակութային հուշարձանների նկարահանման, հաշվառման աշխատանքները և այժմ մենք ունենք լիամետրաժ հետաքրքիր և բացառիկ փաստավավերագրական ֆիլմ:

Պարբերաբար տարվա ընթացքում մարզխորհրդի նիստերում և համայնքապետերի հետ խորհրդակցությունների ընթացքում մարզպետի կողմից տրվել են կոնկրետ հանձնարարականներ համայնքներում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, օգտագործման, շրջակա տարածքների մաքրման և բարեկարգման, սանիտարահիգիենիկ վիճակի պահպանման վերաբերյալ: 2014թ. ընթացքում մարզպետի հանձնարարությամբ համայնքների բնակիչների և դպրոցների ուսուցիչների և աշակերտների մասնակցությամբ կազմակերպվել են շաբաթօրյակներ պատմության և մշակույթի հուշարձանների, նրանց տարածքների մաքրման, ճանապարհների բարեկարգման նպատակով: Աշխատանքները լինելու են շարունակական:

2014թ. ընթացքում օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում մարզպետի ղեկավարությամբ անց են կացվել խորհրդակցություններ համայնքապետերի, համապատասխան ծառայությունների և ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների, հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության մարզային ծառայությունների մասնագետների մասնակցությամբ՝ վերահսկողություն ապահովելու մարզի տարածքում գտնվող հուշարձանների պահպանության և օգտագործման մասին << օրենսդրությամբ նախատեսված լիազորությունների կատարման նկատմամբ: << Արագածոտնի մարզպետարանը ղեկավարվելով <Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին> օրենքի դրույթներով և այլ իրավական ակտերով մշտական հսկողություն է իրականացնում համայնքների տարածքներում գտնվող պատմամշակութային անշարժ հուշարձանների պահպանության գոտիներում ապօրինի հողօգտագործումը կանխելու և այն պահպանելու գործում: Մարզպետի հանձնարարությամբ կրթության, մշակույթի և սպորտի, քաղաքաշինության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը համակարգող վարչությունների աշխատակիցների կողմից պարբերաբար իրականացվում են շրջայցեր մարզի

պատմամշակութային վայրեր, կատարվել են ուսումնասիրություններ հուշարձանների վիճակի, պատմական միջավայրի պահպանության ուղղությամբ:

Մարզի համայնքներում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները ու կից տարածքները հսկվում են տեղական ինքնակառավարման մարմինների, լիազորված մարմնի տարածքային ստորաբաժանման մասնագետների և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների կողմից:

Պետ. բյուջեի և այլ միջոցներով 2014թ. ՀՀ Արագածոտնի մարզպետի հանձնարարությամբ մշակվել, կազմակերպվել և իրականացվել է պետական, ազգային նշանակություն ունեցող բազմաթիվ միջոցառումներ: Կազմված մշակութային միջոցառումների ծրագրի շրջանակներում, ազգային և ավանդական ծեսերի վերականգնման նպատակով կազմակերպվել և իրականացվել են մշակութային միջոցառումներ, որոնցից են Բարեկենդան, Ծաղկազարդի տոն, Զատիկ, Վարդավառ, Խաչվերած և այլն: ՀՀ Արագածոտնի մարզի մշակույթի և սպորտի բաժինը 2014 թվականին մարզի հանրակրթական, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում անցկացրել է մի շարք մշակութային միջոցառումներ, որոնք նպաստել են երեխաների գեղագիտական ճաշակի զարգացմանը, հայրենասիրությանը, կոփել երեխաների միտքը: Տարվա ընթացքում մարզում կազմակերպվել և անցկացվել է 130-ից ավել միջոցառումներ, որոնց մեծ սիրով մասնակցել են և համայնքի բնակիչները, աշակերտները, արվեստի, գեղարվեստի և երաժշտական դպրոցների սաները: Մարզի դպրոցներում միջոցառումները անցկացվել են մեծ սիրով, հանդիսավորությամբ ու պատասխանատվությամբ, լույս ընծայվել պատի թերթեր, դահլիճները զարդարվել են տվյալ միջոցառմանը բնորոշ նկարներով ու լուսանկարներով:

1, <<Մեր մեծերը>> ծրագրի շրջանակներում մարզի գրեթե բոլոր դպրոցներում, գրադարաններում, երաժշտական և արվեստի դպրոցներում անցկացվել են միջոցառումներ նվիրված Գալուստ Գյուլբենկյանին /145-ամյակ/, Արշիլ Գորկուն /110-ամյակ/, Սիամանթոյին /136-ամյակ/, Կոմիտասին /145-ամյակ/ և Հովհաննես Թումանյանին /145-ամյակ/:

1, ՀՀ ԿԳՆ և ՌԴ հետ համատեղ անցկացվել է «Живая классика» 7-րդ դասարանցիների ընթերցանության մրցույթ:

2, Փետրվարի 21-ին Օջական գյուղի դպրատանը անցկացվեց միջոցառում նվիրված մայրենի լեզվի օրվան:

3, Աշտարակի Պերճ Պոռշյանի տուն-թանգարանը մայիսի 17-ին թանգարանների միջազգային օրվան նվիրված «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառման շրջանակներում անցկացվել է «Թանգարանային հավաքածուների միջոցով են ստեղծվում կապեր» խորագրով միջոցառումը:

1. «Արագածոտնի մուսաներ» գրական-մշակութային միավորումը, որը ղեկավարում է Արևշատ Ավագյանը մարզորմ պարբերաբար կազմակերպում է մշակութային մի շարք միջոցառումներ, որն իր շուրջն է համախմբել մարզում և մարզից դուրս բնակվող գրողներին և մտավորականներին:

2. Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ դպրոցներում անցկացվել է «Մեկ դար և ավելի...» խորագրով նկարչական, շարադրության մրցույթներ:

3. Անցկացվել է լայնածավալ միջոցառումներ նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 69-րդ և Շուշիի ազատագրման 22-րդ տարեդարձներին:

4. Բանակ-կրթություն-մշակույթ ոլորտների կապերն ամրապնդելու, մշակույթի և արվեստի միջոցով զինժառանգողների և մատաղ սերնդի հոգում պատմամշակութային արժեքների ու ավանդույթների նկատմամբ հարգալից վերաբերմունք արմատավորելու համար ապրիլի 18-ին հուշարձանների պահպանության միջազգային օրվա կապակցությամբ անցկացվել է միջոցառումներ բանակ-դպրոց համագործակցությամբ:

5. «Փարաջանովի հետադարձ լույսը» խորագրով միջոցառումների շարքում մարզի 30 շնորհալի աշակերտներ այցելեցին Փարաջանովի թանգարան:

6. 2014թ. ընտանիքի տարի հայտարարելու և ընտանիքի տարվա կապակցությամբ մարզի հանրակրթական դպրոցներում անցկացվել է «Իմ ընտանիքի պատմությունը» շարադրությունների մրցույթ:

7. ՀՀ անկախության 23-րդ տարեդարձին նվիրված քաղաքային մարզադաշտում մարզի ազգաբնակչության մասնակցությամբ անցկացվեց տոնական մեծ միջոցառումներ:
8. Կարբի համայնքի Վահան Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցում անցկացվեց Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի հոբելյաններին նվիրված ասմունքի մանկապատանեկան 8-րդ մրցույթ՝ փառատունը:
9. Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառումներ են անցկացվել մարզպետարանի դահլիճում «Մայր իմ անուշ ու անգին» խորագրով:
10. Հունիսի 29-ին Պ. Պոռշյանի անվան թ.3 հ/դ տեղի է ունենալու անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրվան նվիրված միջոցառում:
11. Սփյուռքի երիտասարդների «Արի տուն» հայրենաճանաչության ծրագիրը, որի նպատակն է Հայաստան-հայրենիքը ճանաչելի դարձնել աշխարհասփյուռ հայ երիտասարդներին, մեր մարզում պատրաստվում ենք հյուրընկալել 15 սփյուռքահայ երիտասարդների:
16. Աշտարակի Պ. Պոռշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցը «Հայ ասպետ-2014» եթերաշրջանի եզրափակիչ փուլում երրորդ տեղ զբաղեցնելու համար ստացել է շնորհակալագիր:
17. Մարզի հանրակրթական դպրոցներում անցկացվել է «Արագածոտնի մարզի պատմաճարտարապետական հուշարձանների պատմությունը» թեմայով վիկտորինա-դասախոսություն:
18. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի և ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ ՀՀ Արագածոտնի համայնքներում գործող մշակույթի տներում անվճար ցուցադրվել են կինոդիտումներ, կազմակերպվել են ներկայացումներ:
19. ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների 1500 աշակերտ Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում ունկնդրել են «Ալմաստ» և «Անուշ» օպերաները:
20. ՀՀ Արագածոտնի մարզում գործող մշակույթի տներում մշակույթի նախարարության հետ համատեղ անց է կացվել դուդուկի, ազգագրական երգ ու պարի, «Սասունցի Դավիթ» էպոսի փառատուններ:

- 21.Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» 2014 թվականի ծրագրի շրջանակներում մարզում հյուրընկալվեց 15 սփյուռքահայ երիտասարդներ:
- 22.Աշտարակի Պ. Պոռշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում տեղի ունեցավ անհայտ կորած ազատամարտիկի հիշատակի օրվան /հունիսի 29/ նվիրված միջոցառում:
- 23.<< Արագածոտնի մարզի Սսունիկ համայնքում տեղի ունեցավ «Սասնա ծռեր» էպոսին նվիրված ամենամյա մրցույթ-փառատունը:
- 24.Ստեպտեմբերի 26-ից 28-ը <<Հովհաննես Թումանյանի թանգարան>> ՊՈԱԿ-ում տեղի ունեցավ <<Երկնքից երեք խնձոր ընկավ...>> ամենամյա հեքիաթասացության և բարբառի մրցույթ-փառատունը,որին մասնակցել են մեր մարզի մի շարք մշակույթի տների սաներ:
- 25.Օշական համայնքի մշակույթի տան Անժելա Շահնաբաթյանի անվան պարային համույթը՝ թվով 15 մասնակից 2014թվականի օգոստոսի 6-8-ը Թուրքմենստանում մասնակցել են “Ավազա”5-րդ մանկապատանեկան երաժշտական փառատունին:
- 26.Աշտարակ քաղաքի Ա. Այվազյանի անվան երաժշտական դպրոցը ֆրանսահայ դուդուկահար Լևոն Չաթիկյանի հրավերով համերգներ են տվել Ռոմա և Լիոն քաղաքներում:
- 27.<<Կինոսշուն>> հայկական կինոյի ամիս>> ծրագրի շրջանակներում << Արագածոտնի մարզում հայկական ֆիլմեր ցուցադրվեցին Աշտարակի թիվ 3, Ապարանի թիվ 2, Թալինի թիվ 1 հիմնական և Ծաղկահովտի միջնակարգ դպրոցներում:
- 28.<< ԿԳՆ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ՔԴԿ կողմից հայտարարված <<Ավետարանական առակները դպրոցում>> խորագրով մրցույթի հանրապետական փուլում Ուջանի Չորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցը արժանացավ <<Խրոխտ ոգու պարզև>> մրցանակի:
- 29.Մարզի հանրակրթական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում անցկացվել է «Իմ երևակայության Հնդկաստանը» թեմայով նկարչական և շարադրությունների մրցույթ:

Աղյուսակ 2 Մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտի 2014թ. արդյունքային ցուցանիշները.

| Միջոցառման անվանումը | Արդյունքային ցուցանիշը | Թիրախ | Փաստացի |
|----------------------|------------------------|-------|---------|
|----------------------|------------------------|-------|---------|

| | | | |
|---|---|------------------------|---------------------|
| Մշակույթի և մարզական հաստատությունների շենքերի հիմնանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում | Հիմնանորոգվող մշակութային օբյեկտների թիվը Ներդրումների չափը | 6 767348.2 մլն դրամ | 6 544.4 մլն դրամ |
| Մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպում | Մարզային մշակութային միջոցառումների կազմակերպում | 3278.2 հազ. դրամ | 810,0 հազ. դրամ |

Սպորտ

Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը: Մարզային տարածքային փուլին մասնակցել են 45 երիտասարդ ընտանիքներ, որոնցից լավագույն 12 ընտանիք մասնակցել են մարզային փուլին:

2. «Կորյուն» ռազմամարզական խաղերի տարածքային և մարզային փուլերին, մասնակցել են մարզի 36 դպրոցների 198 աշակերտ:
3. Կազմակերպվել և անցկացվել է «Ազգային ժողովի գավաթի խաղարկության մրցումներ, ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերին մասնակցել են 81 դպրոցի 1665 աշակերտ:
4. Շախմատի առարկայական հանրապետական օլիմպիադայի տարածքային և մարզային մրցումներին մասնակցել են մարզի բոլոր 119 դպրոցների աշակերտական թիմերը:
6. Անցկացվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի Արագածոտնի մարզի ներդպրոցական, տարածքային և մարզային փուլեր՝ մասնակցել են մարզի 82 դպրոց՝ 782 աշակերտներով:
7. Մարզի դպրոցական թիմերը մասնակցել են «Հայրոցականների մարզական խաղերին՝ շախմատ, ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, սեղանի թենիս, աթլետիկա և հանդբոլ մարզաձևերից:
8. 2014թ. կազմակերպվել և անցկացվել են շախմատի, ֆուտբոլի, ըմբշամարտի, վոլեյբոլի գյուղական համայնքների, քաղաքների և մարզային առաջնություններ:
9. «Հայրոցականների «Դիպուկ հրաձիգ» հանրապետական մրցումների տարածքային և մարզային փուլերը, Մելիքգյուղի միջնակարգ դպրոցի թիմը գրավել է 6-րդ տեղը:
10. «Հայրոցականների նախազորակոչական և դպրոցական հիմնարկներում անցկացվելիք «Սպորտլանդիա-2014» մարզական միջոցառումը
11. Նախնական զինվորական պատրաստության առարկայի գծով դաշտային գործնական պարապմունքներ

4.2.3 Խնդիրները

Չնայած իրականացված աշխատանքներին դեռևս շարունակում է հրատապ մնալ մարզի մշակույթի և սպորտի, կրթական հաստատությունների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման հարցը:

Առաջնահերթ խնդիր է հանդիսանում նաև կադրերի վերապատրաստման և վերաորակավորման հարցը:

4.2.4 Քաղաժ դասերը և հետագա քայլերը


Հաշվետու ժամանակահատվածում մարզի գյուղական և քաղաքային համայնքներում կազմակերպված մշակութային և սպորտային միջոցառումները էական ազդեցություն են թողել մարզի բնակչության գեղագիտական դաստիարակության, ազատ ժամանցի կազմակերպման, մատաղ սերնդի հոգևոր դաստիարակության վրա:

2014 թվականի ընթացքում կարևորվում է կազմակերպվող միջոցառումներին բնակչության ակտիվ մասնակցությունը, մասսայական մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպումը և հոգևոր մշակութային կրթության ուղղությամբ աշխատանքների ակտիվացումը

| | | |
|--|---|---------------------|
| <p>4.1 Մարզական, մշակութային և արտադրողական հաստատությունների շենքերի կառուցում, վերանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում</p> | <p>Աշտարակի մարզադպրոցի հիմնանորոգում, Եկեղեցիների վերանորոգում, Քուչակի մշակույթի տան ավարտում, մարզի 4 Եկեղեցիների/Հարթավան, Իրինդ, Ոսկեվազ, Զովունի/Եկեղեցիների վերանորոգում Աշնակ համայնքի կենցաղի տան վերանորոգում, Թալինի մշակույթի տան լոկալ ջեռուցման համակարգի կառուցում, Աշտարակի քաղաքային զբոսայգու բարեկարգում և ինժինեռական համակարգի վերանորոգում, Ոսկեթաս համայնքի հանդիսությունների տան վերանորոգում, Լուսազյուղ համայնքի հանդիսությունների տան վերանորոգման համար</p> | <p>544,4 միլիոն</p> |
|--|---|---------------------|

| | | | |
|--|---|---|--|
| | | աջակցություն, Ոսկեհատ համայնքին աջակցություն մշակույթի տան վերանորոգման համար, Արտաշավան համայնքին աջակցություն մշակույթի տան վերանորոգման համար, Շողակն համայնքին աջակցություն մշակույթի տան վերանորոգման համար, Թթուջուր համայնքին աջակցություն մշակույթի տան վերանորոգման համար, | |
| 4.2. Մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում | մարզային և միջհամայնքային մարզական միջոցառումների կազմակերպում Թատերական ներկայացումների թիվը մասնակիցների թիվը | 27 12 7 4300 | |
| 4.3 Մշակութային ժառանգության պահպանում | Մարզում գտնվող պատմամշակութային հուշար- ձանների վերանորոգում | 4 | |

«Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
պետի պաշտոնակատար



Ս ՊԵՏՐՈՍՅԱՆ